USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

COUNTERPART INTERNTATIONAL

Policy Brief
Համառոտագիր

Աջակցություն քաղաքացիական հասարակության զարգացման քաղաքականության, կարգավորման և ինստիտուցիոնալ բարեփոխումներին Հայաստանում

Supporting Policy, Regulatory and Institutional Reforms for Civil Society Development in Armenia

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No AID-111-LA-10-00001 համագործակցության պայմանագրի DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում Մարդկային զարգացման կենտրոնի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

This publication was made possible by the support of Counterpart International's Armenia Representation and the generous support of the American people through the United States Agency for International Development (USAID) under Associate Cooperative Agreement No. AID-111-LA-10-00001, under Cooperative Agreement Number DFD-A-00-09-00141-00 through the International Center fro Human Development. Content, views and opinions expressed herein are those of the authors, and the responsibility of the International Center fro Human Development, and do not necessarily reflect the views of Counterpart Armenia, USAID or the United States Government.”

Քաղաքացիական հասարակության զարգացման քաղաքականությունը ՀՀ-ում. քաղաքական շահերի բավարարման ներկա պլատֆորմը

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Քաղաքացիական հասարակության զարգացման միջավայրը. տաշտակն ինչպես որ կա

Անցումնային ժողովրդավարություններում քաղաքացիական հասարակության կայացման մակարդակը ներկայում ընդունված է գնահատել ոչ-պետական կազմակերպությունների թվով: Այս մոտեցման տրամաբանությամբ երեք միլիոնանոց Հայաստանում, ուր գրանցված են շուրջ 5000 հասարակական կազմակերպություններ, քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալացումը թերևս կարելի է համարել կայացած:

Դժվար կլինի չհամաձայնել նման հայտարարության հետ՝ հաշվի առնելով այդ կառույցների գործունեության արդյունքները վերջին տարում, որոնցից թերևս ամենախոսունը «Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի» նոր նախագծով առաջարկվող փոփոխությունների կասեցումն էր: Այս փորձությունը կարելի է համարել Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացածության նշաձող: Կայացումը, սակայն, հասարակության այս կառույցի ոսկրացում չի նշանակում բնավ, այլ զարգացման նոր հորիզոններ, հնարավորություններ և, իհարկե, նոր կարիքներ ու մարտահրավերներ: Կարծում ենք հասունացել է քաղաքացիական հասարակության զարգացման նոր խնդիր սահմանելու և դրանց հեռահար լուծումներ փնտրելու պահը: Լուծումներ, որոնք հիմք կդառնան համապարփակ ու հեռամետ նպատակների նյութականացման համար:

Քաղաքացիական հասարակության կառույցների, մասնավորապես հասարակական կազմակերպությունների զարգացման համար ներկա փուլում առավել կարևոր նշանակություն ունի նպատակային պետական քաղաքականության և իրավական կարգավորման միջավայրը:

Սակայն արդյո՞ք ներկա պետական քաղաքականությունն ընձեռում է զարգացման բարենպաստ հնարավորություններ: Ազգային մի շարք ռազմավարական փաստաթղթերում, մասնավորապես՝ Կայուն զարգացման ծրագրում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում կամ Եվրոպական հարևանության և գործընկերության փաստաթղթերում, այդ թվում՝ 2011-2013թթ. ազգային ինդիկատիվ ծրագիրը, քաղաքացիական հասարակության կառույցների մասնակցությունը երկրի կառավարման և ոլորտային քաղաքականությունների մշակման ու իրականացման գործում ճանաչվել է առանցքային: Սակայն վերը նշված ռազմավարություններից միայն ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկն է նախանշում այդ մասնակցության հստակ մեխանիզմ. ՔՀ մասնակցության վերաբերյալ հայեցակարգի մշակում:

Քաղաքականության հարթությունում ընդհանուր տպավորությունն այնպիսին է, ասես հայաստանյան իշխանությունները, առաջնորդվելով եվրոպական համայնքին ինտեգրվելու իրենց իսկ սահմանած տրամաբանությամբ, օրերից մի օր պարտավորված են եղել երկխոսել ՔՀԿ-ների հետ, և այսօր այդ «պարտադրված» տրամաբանությունը շարունակում է գործել զուտ իներցիայով: Որպես այդ իներցիայի հետևանք, ՔՀԿ-ներն այսօր առավել հստակորեն են պատկերացնում իրենց շահերը, զարգացման հնարավորություններն ու մարտահրավերները և պատրաստ են նոր մի ուժ ձևավորել հարաբերությունների դինամիկան դրականորեն փոփոխելու նպատակով:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Նոր տաշտակի անհրաժեշտությունը

Նման նոր հարաբերությունների դինամիկայի առանցքային տարբերությունը զարգացման կարիքների առավել հստակ գիտակցումն է ՔՀԿ-ների կողմից: Թերևս արձագանքողից նախաձեռնող գործելաոճի անցնելու ժամանակն է: Ընդ որում, նման գործելաոճը պիտի ուղղված լինի զարգացման օրակարգը երկկողմանիորեն ձևավորելուն: Զարգացած քաղաքացիական հասարակության կառույցն անկախ իր գործունեության առաքելությունից պիտի կարողանա հետևողականորեն իրականացնել իր առաքելությանը հարիր գործառույթներ՝ առանց արտաքին միջավայրից բխող խոչընդոտների միջամտության, որոնք կարող են ընդհատել նրա գործունեությունը: Այդպիսի կառույցը պիտի ի զորու լինի կայուն և ինքնաբավ կերպով զարգանալու, ինչպես նաև փնտրի ու առաջարկի ստեղծագործ և նորարարական մոտեցումներ:

Նման գործունեություն ծավալելու համար ամենաէական նախապայմաններից է պետության և հասարակության բոլոր շերտերի կողմից ՔՀԿ-ների ընկալման փոփոխությունը: Անհրաժշետ է, որպեսզի իշխանություններն ընկալեն ու ճանաչեն ՔՀԿ-ներին որպես ազգային շահերի բավարարման և ճյուղային զարգացման գործընթացների լիիրավ ու լիարժեք դերակատար: Վերաբերմունքի փոփոխությունն ամրապնդելու համար անհրաժեշտ են հստակ ու գործուն մեխանիզմներ, այդ թվում՝ պետական պատվերների ինստիտուտի ձևավորումն ու հիմնադրամների ստեղծումը՝ ՔՀԿ-ների պետականակերտ գործունեությանն աջակցելու համար:

Հին ու նոր տաշտակների միջև

Հին տաշտակից՝ ներկա «պարտադրված», ինքերցիոն քաղաքականությունից անցումը որակապես նորին, որի շրջանակներում քաղաքացիական հասարակությունը և պետությունը հանդես են գալիս որպես գործընկերներ, էվոլյուցիոն գործընթաց է: Դրան պիտի սատար կանգնեն ներկա և հաջորդ իշխանությունները, ընդ որում՝ բացառելով աջակցության որևէ քաղաքականցում և ապահովելով գործունեության մատչելի, թափանցիկ և հավասար պայմաններ: Ներկայում ՔՀԿ-ների ֆինանսական անկայունությունը և հեռահար ռազմավարության բացակայությունը նրանց հաճախ նետում են մի «կրակից» մյուսը՝ միջազգային դոնորից իշխանություններ կամ հակառակը՝ ստիպելով հանդես գալ առավելագույնս ճկուն լարախաղացի դերում, ճարպկորեն խաղարկել սեփական առաքելության իրականացման ու պատվիրատուի շահերի բավարարման լարերի միջև:

ՔՀԿ-ներն ակներևաբաև երկար խուսանավել չեն կարող. պիտի շարունակեն խաղալ՝ փորձելով աստիճանաբար ամրացնել պետության լարը: Այն այնքան ամուր պիտի լինի, որ ցանկացած լարախաղաց հավասար հնարավորություն ունենա ապահովելու իր լավագույն դերակատարումը՝ հիմնվելով իր հմտությունների վրա: Այդ հիմքը պետության հստակ ու հեռահար քաղաքականությունը պիտի լինի, ոչ թե դրա կարճաժամկետ, կողմնակալ մոտեցումները՝ քաղաքական պատեհապաշտական նկրտումներն ապահովելու համար:

Համառոտագիրը մշակվել է 2011թ-ի հունիսի 30-ին կայացած՝ «Քաղաքացիական հասարակության կառույցների զարգացման քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր «Աջակցություն Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացմանը միտված քաղաքականության, կանոնակարգման և ինստիտուցիոնալ բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Քաունթերփարթ ինթենեյշնլ» կազմակերպության աջակցությամբ: